

we all need



for healthy, thriving and engaged communities

Ի՞նչ է զբոսայգու կարիքների գնահատումը

Լուս Անջելեսի շրջանը ողջ շրջանով մեկզբոսայգիների և հանգստի կարիքների գնահատում է անցկացնում՝ և՛ քաղաքներում և՛ չներգրավված գոտիներում: Չբոսայգիների կարիքների գնահատման նպատակն է շրջանի բոլոր համայնքներին ներգրավել համագործակցային գործընթացում՝ զբոսայգիներին և հանգստին վերաբերող ապագա որոշումների կայացման համար տվյալներ և ներածում հավաքելու նպատակով: Չբոսայգիների կարիքների գնահատումը կմեծացնի արդեն գոյություն ունեցող զբոսայգիների և հանգստի վայրերի վերաբերյալ մեր պատկերացումը, և կօգնի մեզ՝ որոշել, թե ինչպես բարելավել, ընդարձակել և ավելի մատչելի դարձնել դրանք: Մասնավորապես, վերջնական զեկույցը կորոշի ուսումնասիրության տարածքները և կհաստատի, առաջնահերթություն կտա և կուրվագծի հնարավոր զբոսայգիների նախագծերի ծախսերը՝ յուրաքանչյուր ուսումնասիրության տարածքում:

Ո՞վ ներգրավված կլինի

- Դո՛ւք՝ Շրջանի բոլոր համայնքները, ներառյալ՝ քաղաքները և չներգրավված գոտիները:
- Կազմկոմիտե, որի անդամները կլինեն՝
 - Վերահսկողական վարչաշրջաններ
 - Կառավարման խորհուրդներ (COG)
 - Համայնքում հիմնված կազմակերպություններ
 - Համայնքի անդամներ
 - Շրջանային վարչություններ և գործընկեր հաստատություններ
- Տեղական գործակալությունները և համայնքում հիմնված կազմակերպությունները կվերապատրաստվեն, որպեսզի համայնքային մասնակցության ձեռնարկներ կազմակերպեն յուրաքանչյուր ուսումնասիրության տարածքում՝ զբոսայգիների և հանգստի կարիքներն ու առաջնահերթությունները որոշելու համար:

(հաջորդ էջ)



Ինչո՞ւ գնահատում իրականացնել:

- Գնահատման արդյունքում կլինի նախագծերի և գների նախահաշիվների կանխատեսող մոտավոր ծախսերի ցանկ՝ առաջնահերթության կարգով, յուրաքանչյուր ուսումնասիրության գոտու համար:
- Այն ողջ շրջանով մեկ նոր հնարավորություններ կհայտնաբերի զբոսայգիների և հանգստի շրջանում՝ ըստ ուսումնասիրության գոտու:
- Չբոսայգիների կարիքների գնահատումը կօգնի քաղաքներին և չներգրավված գոտիներին՝ ապագա զբոսայգիների ծրագրման գործում:
- Չբոսայգու կարիքների գնահատումը կարող է օգտագործվել որպես ուղեցույց՝ ապագա ֆինանսավորման մեխանիզմների հնարավոր զարգացման համար:
- Արդյունքները նաև կարող են օգտագործվել դաշնային և նահանգային ռեսուրսների առավելագույն օգտագործման համար, ինչպես նաև տեղական ֆինանսավորման որոշումներն ուղղորդելու համար:



ՉԲՈՍԱԳԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐԲԱԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՄԲՈՋ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ

we all need



for healthy, thriving and engaged communities



LACountyParkNeeds.org

Ի՞նչ են ուսումնասիրության գոտիները

- Չբուսայգու կարիքների գնահատումը կազմակերպված է ուսումնասիրության գոտիների շուրջ, որոնք կօգտագործվեն՝ համայնքին հատուկ կարիքներն առանձնացնելու և առաջնահերթ նախագծերը որոշելու համար:
- Կազմկումիտեն, խորհրդատու թիմի աջակցությամբ ստեղծել է չափանիշեր՝ ուսումնասիրության գոտիներն առանձնացնելու համար:

Ի՞նչ չափորոշիչներ կօգտագործվեն կարիքը որոշելու համար

- Կազմկումիտեն հաստատել է զբոսայգիների և հանգստի չափորոշիչների խումբ՝ ողջ շրջանում կարիքները համեմատելու համար:
- Չափորոշիչների այս խումբը կօգտագործվի զբոսայգիների կարիքների գնահատման համար, բայց այն նախատեսված չէ փոխարինելու համայնքային զբոսայգիների և հանգստի չափորոշիչներին:

Ի՞նչ կընդգրկվի վերլուծության մեջ

- Քաղաքի և շրջանի զբոսայգիները, ներառյալ՝ համայնքային զբոսայգիները, թաղամասային զբոսայգիները, փոքր զբոսայգիները և մանկական զբոսավայրերը:
- Քաղաքի և շրջանի հանգստի գոտիները, ներառյալ՝ լողավազանները, հանգստի կենտրոնները, մարզասրահները և գեղասահքի զբոսայգիները
- Շրջանային զբոսայգիներ
- Դպրոցական հանգստի գոտիներ՝ համատեղ օգտագործման համաձայնագրերով
- Արահետ-միջանցքներ՝ ջրհեղեղների վերահսկողության ջրանցքների երկայնքով
- Չբոսայգիներից դուրս գտնվող անցման հանրային արահետներ, որոնք անչափ սեփականություն են

Ի՞նչը չի ընդգրկվելու վերլուծության մեջ

- Գուլֆի դաշտերը
- Գերեզմանատները
- Հրապարակները և հանրային արվեստի նմուշների տեղադրումները
- Լողափեր
- Դպրոցներ (բացի հանգստի գոտիներից՝ համատեղ օգտագործման համաձայնագրերով)

Ե՞րբ տեղի կունենա գնահատումը

- Չբոսայգու կարիքների գնահատումը կիրականացվի և կավարտվի 15 ամսում՝ 2015թ. մարտից մինչև 2016թ. մայիս:



ՉԲՈՍԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԴՆՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՄԲՈՂՁ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՇՐՋԱՆՈՒՄ